

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՎԻ ԼՈՒ Է» ՍՊԸ, ՀՎՀՀ 01239337, Հ/Հ 2050422318401001 Ինտերնետային կայքը, ք. Արարատ, Շահումյան 24/1

Հեռ.՝ +374 98161015, +374 95666630

vluе.travel@mail.ru

ք. Երևան

№ 02747

«ՎԻ ԼՈՒ Է» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող» որը գործակալական պայմանագրով հանդես է գալիս որպես 1.2.1 կետում նշված հյուրանոցի (հանգստյան տան) անունից (Գործակալ) և
այսուհետ՝ «Պատվիրատու» մյուս կողմից, որոնք սույն պայմանագրում համարվում են կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:
1.2 Սույն պայմանագրով մատուցվող ծառայություններից օգտվելու են՝ _____ Պատվիրատուն, _____ ընտանիքի անդամ _____, 2 անդամ _____, 3 անդամ _____, 4 անդամ _____
1.2.1 Մատուցվող ծառայությունները ներառում են՝

1.2.1 _____
(Իրականացվող ծառայությունների անվանումը, հյուրանոցային հասցեն, քաղաքը, օդուղի, օդուղու ստանդարտը (ընթացակարգը))

1.2.2 _____
Առաջարկվող հասարակության Պատվիրատուի ծանուցումով

1.2.3 Տրանսպորտ՝ ա _____ Միկրոավտոբուս կամ ավտոբուս, ք. _____ Փոքր մարդատար, գ. _____ Միակողմ _____ 201 թ., Երկկողմ _____ 201 թ.
1.2.4 Մուտնոց՝ ա _____ 1 անգամ, ք. _____ 2 անգամ, գ. _____ 3 անգամ, դ. _____ Հավելյալ:

1.2.5 _____
Այլ ծառայություններ

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝
2.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, պայմանավորված ժամկետներում համաձայն կատարողի կողմից սահմանված ընթացակարգի:
2.2 Կատարողն իրավունք ունի՝
2.2.1 Մատուցած ծառայության համար պահանջել 3.1 կետում նշված գումարը:
2.2.2 Չմատուցել 1.2 կետում նշված ծառայությունները, եթե Պատվիրատուն չի վճարում 3.2 կետում նշված գումարը սույն պայմանագրի համապատասխան:
2.3 Պատվիրատուն պարտավոր է՝
2.3.1 Չբռնաշրջության (հանգստի) մեկնման օրվա մասին տեղեկացնել Կատարողին մեկնման օրվանից առնվազն 15 օրացույցային օր առաջ՝ Կատարողի կողմից համապատասխան ամրագրվող կատարելու նպատակով:
2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝
2.4.1 Ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները:
2.4.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան՝ սույն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,
2.4.3 Կատարողի հետ փոխադարձ համաձայնությամբ ավելացնել, պակասեցնել, փոփոխել 1.2 կետում նշված ծառայությունների ցանկը և դրանց կատարման ժամկետները:
2.4.4 Իր համար հասկանալի լեզվով Կատարողին ստանալ ամբողջական տեղեկատվություն զբոսաշրջային ծառայության վերաբերյալ:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը
3.1 Սույն պայմանագրի 1.2 կետով մատուցվող ծառայությունների գինը կազմում է՝ _____ ՀՀ դրամ
որից հյուրանոցի մեկ օրվա արժեքը՝ _____ ՀՀ դրամ, այլ ծառայություններ _____ ՀՀ դրամ

ներառյալ հարկերը: Գնի մեջ ներառված են հյուրանոցային տնտեսության արժեքը և միջնորդային ծառայության արժեքը:
3.2 Սույն պայմանագիրը կնքելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն Կատարողին՝ փոխանցում է կանխավճար՝ Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվին գումար մուտքագրվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, եթե պայմանագրով պայմանագրային գինը գերազանցում է սոցիալական փաթեթով հատկացվող գումարի սահմանաչափը, կամ որևիցե պատճառով ընդհատվել են սոցիալական փաթեթով նախատեսված փոխանցումները, ապա պայմանագրային գումարի պակասորդ մասը պատվիրատուն պարտավոր է վճարել սեփական միջոցներով:
3.3 Սույն պայմանագիրը ստորագրելով Պատվիրատուն տալիս է իր համաձայնությունը Կատարողի կողմից համապատասխան բանկ սույն պայմանագրի գնի ստացման պահանջագիր ներկայացնելու և բանկի կողմից Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվից անակցեպտ ձևով սույն պայմանագրի գնի գանձման և Կատարողին փոխանցելու համար:
3.4 Պատվիրատուի կողմից վճարված գումարները ենթակա չեն վերադարձման՝
ա) 25% չափով, եթե Պատվիրատուն 1.2 կետում նշված ծառայություններից հրաժարվել է ոչ ուշ, քան ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից 2 աշխատանքային օր առաջ:
բ) 50% չափով, եթե Պատվիրատուն 1.2 կետում նշված ծառայություններից հրաժարվել է ա) ենթակետում նշված ժամկետի խախտմամբ կամ ընդհանրապես չի օգտվել 1.2 կետում նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայության մատուցող անձի գրավոր ծանուցումը զբոսաշրջային օպերատորին սպառողի կողմից հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Կատարողի օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.2 Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում՝ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն և՛ ձեռք չեղելու դեպքում վեճերը լուծվում են դատարանի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:
7.2 Գյուրանոցային, տրանսպորտային և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ անձանց կողմից (ծառայությունների մատակարարներ), որոնք հետ Կատարողի ունի համապատասխան պայմանագրեր: Գյուրանոցային, հանգստյան տան առողջարանային ծառայությունների մատուցման ժամանակ կարող է հանդես գալ, որպես 1.2.1 կետում նշված հյուրանոցի (հանգստյան տան անունից (գործակալ)):
7.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:
7.4 Սույն պայմանագրով Կատարողի համար պարտավորություններն առաջանում են սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված կանխավճարի փոխանցումից հետո:

ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ՓՈՒՍՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԻ

Ծառայություն մատուցող՝ «ՎԻ ԼՈՒ Է» ՍՊԸ, Հ/Հ 2050422318401001 Ինտերնետային կայքը, ք. Արարատ, Շահումյան 24/1: ՀՎՀՀ 01239337 vluе.travel@mail.ru		№ 02747
Պատվիրատուի Անուն, Ազգանուն, Հայրանուն	Անձնագրի սերիա, համար, ում կողմից է տրված, ամսաթիվ	Հեռ.
Պատվիրատուի հասցեն	Աշխատանքի վայր	
Պայմանագրի գումարը (ծառայությունների փաթեթի ընդհանուր արժեքը) _____ (_____)		ՀՀ դրամ

8. Կողմերի ստորագրությունները

Կատարող՝ «ՎԻ ԼՈՒ Է» ՍՊԸ _____ Պատվիրատու՝ _____
Տնօրեն՝ _____ Ս. Խաչատրյան _____
ստորագրություն _____ ստորագրություն _____
Կ.Տ.